ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

ՂԱՄՈՅԱՆ Լ.Ա.

Գեղարվեստական խոսքի գեղեցկությունն ու արտահայտչականությունը ոչ թե բառերի քանակով են պայմանավորված, այլ դրանց տեղին գործածությամբ: Գեղարվեստական խոսքում բառը նախ և առաջ ենթարկվում է գրողի գեղագիտական, հուզական մշակմանը, ապա նոր դառնում բովանդակության, ասելիքի կրող: Լեզվի ընդհանուր բառապաշարից ընտրություն կատարելն այնքան էլ հեշտ չէ գրողի համար. բառերից նա պիտի ընտրի ամենահարմարն ու ամենահրապուրիչը, ամենադիպուկը, ոճականորեն առանձնահատուկը:

Ռ. Դավոյանի չափածոյում ամեն մի բառ օգտագործված է տեղին: Նա կարողանում է բառերի ուրույն դասավորությամբ և շեշտադրությամբ այնպիսի արտահայտիչ ու գեղարվեստական պատկերներ ստեղծել, որոնք դառնում են տպավորիչ և գրեթե անմոռանալի: Բանաստեղծը մեծ վարպետությամբ ի հայտ է բերում բառի գեղագիտական գործածության բացառիկ օրինակներ: Բառերի ամենատարբեր զուգորդություններով հմտորեն կերտում է յուրօրինակ բառակապակցություններ և մակդիրներ:

Հեղինակի չափածոյում յուրաքանչյուր բառ կարող է հանդես գալ բազմազան առումներով՝ ամեն անգամ վերստին կապակցության մեջ մտնելով (ձևաբանական փոփոխությունների ենթարկվելով) իր նման այլ բառերի հետ: Հետևաբար, Ռ. Դավոյանի չափածոն մի շարք առանձնահատկությունների հետ միաժամանակ հատկանշվում է նաև բառակապակցությունների և մակդիրների ամենաբազմազան գործածությամբ, դրանց հմուտ և ճաշակով գործառությամբ: Պոետական բառակապակցությունները, որոնք հանդես են գալիս որպես խոսքի պատկերավոր արտահայտություններ, լիցքավորված են հուզական-արտահայտչական վառ գույներով: Դրանք հիմնականում կայուն և յուրօրինակ միավորներ են, բանաստեղծի ոճին բնորոշ կապակցություններ:

Ինչպես ամեն մի ինքնատիպ բանաստեղծ, Ռ. Դավոյանը ևս ձգտում է խուսափել պատկերների միօրինակություններից ու կրկնություններից և ամեն անգամ, կազմելով նորանոր կապակցություններ, հյուսում է ինքնատիպ մի ամբողջական գեղարվեստական կտավ: Իսկ նրա ստեղծած յուրաքանչյուր պատկեր շոշափելի է և կոնկրետ, զերծ ավելորդ շքեղություններից ու պաճուճանքներից: Յուրաքանչյուր բառակապակցության վառ պատկերավորության հատկանիշն ակնհայտ է դառնում հենց խոսքային միջավայրում:

Հեղինակի բառապաշարում, իբրև մակդիր, հանդես են գալիս գրեթե բոլոր խոսքի մասերին պատկանող բառային միավորները: Թեև առավել ընդգծված յուրօրինակություն և վառ պատկերավորություն ունեն գոյականական, ածականական, ինչպես նաև դերբայական ձևերը:

Գոյական մակդիրն ավելի խորն է բնութագրում երևույթը, քանի որ այն ներկայացնում է բոլոր հնարավոր չափանիշներով: Այսպես, ուղղա-

կան հոլովով դրված գոյական կապակցությունների շարքում յուրահատուկ տեղ ունի *փիլիսոփա կյանք՝* Միշտ էլ կատակում է փիլիսոփա կյանքը (ԸԵ, 10) կազմությունը, որի լրացումը շրջված ստորոգելիական վերադիր է հիշեցնում, և այն հատկանիշ է արտահայտում սոսկ իր որոշիչ գործառույթի պահանջով, ոչ թե բառային բուն իմաստով, այլ շարահյուսական դերով: Այդպես նաև՝ *հովիվ լուսին՝* Հովիվ լուսինը թող հաշվի դանդաղ Աստղերի հոտը՝ խավարին գամած (ԿԲԱ, 174) կապակցությունը: Առանձին կարելի է նշել այն կապակցությունները, որոնցում լրացումն ունի այլ հոլովաձևի կամ այլ խոսքի մասի պատկանող միավորի արժեք: Օրինակ՝ *ոսկի ամպ* (ՔԲ, 94), *արծաթ ձյուներ* (ԸԵ, 470), *մարմար ծիծաղ* (ՔԲ, 160), *թավիշ արցունք* (ԿԲԱ, 39), *արծաթ ձայներ* (ԸԵ, 473) և այլն:

Պատկերային արտահայտչականությամբ և գունագեղությամբ օժտված մի շարք հիշյալ կարգի գոյականների գործածությամբ հեղինակը կարողանում է բառերի մեջ գտնել նոր իմաստներ, իմաստային ուրույն երանգներ: «Իսկ բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է, և մեծ նշանակություն պիտի տա բանաստեղծը բառին»[1]: Բառընտրությունը, բառագործածությունը, պատկերների կերտման բառային հնարների գործածությունը հեղինակի անհատականության, ինչպես նաև լեզվամտածողության արտահայտություններն են, որոնց շնորհիվ ժամանակակից հայ չափածոյի վարպետը հաջողությունների է հասել:

Դավոյանի բառապաշարում ուրույն տեղ ունեն նաև գոյականի՝ սեռական հոլովով դրված լրացում բառակապակցությունները, որոնց գործածությունը բավականին բազմազան է, ինքնատիպ: Դրանցից են՝

1) հատկացուցիչ հատկացյալ հարաբերություն. ա) ստացական սեռականով կապակցություններ՝ *երգի աչքեր* (ԸԵ, 220), բ) *ենթակայական սեռականով կապակցություններ՝ մղումի հնք* (ՔԲ, 11), *մտքի ճառագում* (ՔԲ, 16), գ) ծագման սեռականով՝ *երգերի կրակ, բույրերի կարոտ, տենչանքների կայծկլտոցներ* (ՔԲ, 161), դ) մասնական սեռականով՝ *ներշընչումի մասունք* (ՔԲ, 31), ե) պատճառի, սկզբնապատճառի, ազդակի սեռականով՝ *բաբախումի հրճվանքներ* (ՔԲ, 35) և այլն:

2) որոշիչ որոշյալի հարաբերություն. ա) բաղկացության սեռականով՝ *սիրահարների պարս* (ՏՍ, 304), *աստղերի հոտ* (ԿԲԱ, 174), *սերունդների պարս* (ՔԲ, 7), բ) վերաբերության սեռականով՝ *սֆինքսների խոսք* (ԸԵ, 412), գ) համեմատության և գերադրության սեռականով՝ *անցյալի անցյալ* (ԸԵ, 437), *իրիկվա իրիկուն* (ԸԵ, 437) և այլն:

3) պարագայական սեռականով կապակցություններ. ա) տարածական (տեղի) հարաբերության սեռականով՝ *դրախտի լուրեր* (ԸԵ, 266), տիեզերքի զնդան (ՔԲ, 7), բ) նպատակի սեռականով՝ *մարգարտանալու տենչանք* (ԿԲԱ, 148) և այլն:

Կան նաև բարդ բառերով արտահայտված այնպիսի մակդիրներ, որոնք հեղինակի լեզվին մի առանձին անհատական երանգ են հաղորդում, ինչ-

[1] Թումանյանը քննադատ, Ե., 1939, էջ 333:

պես՝ *աղոթք-անեծքի խոսք*՝ Մայրս թախտի տակ հավաքում է մեզ, Աղոթք-անեծքի խոսք է կրկնում (ԿԲԱ, 178), *արեգակ-երկրի պորտ*՝ Ես արև էի դառնում լիովին՝ Արեգակ-երկրի ճիշտ պորտին դրված (ՔԲ, 94), *բամբակ-բարևների հակեր*՝ Բամբակ-բարևների հակերն իմ շալակին Եվ մարմնով, հոգով ամբողջովին պրկված, Ընդունում եմ մեկ-մեկ սրերն այն զայրագին (ՔԲ, 87): Այսպիսով, գեղարվեստական խոսքում յուրաքանչյուր բառի գործածության գնահատության չափանիշը տեսանելի է դառնում լեզվական համապատասխան միջավայրում:

Ռ. Դավոյանի բառապաշարում գերիշխողն ածականով արտահայտված մակդիրներն են, ընդ որում, գործածության մեջ են դրված և՛ որակական, և՛ հարաբերական ածականները: Հարաբերական ածականների միջոցով բանաստեղծը խոսքի գեղարվեստականացման լայն հնարավորություններ է ստեղծում՝ ինքնատիպությամբ օժտելով իր չափածոն, օրինակ՝ սաթե բառեր (ԸԵ, 80), *պղնձե վարդ* (ՊՎ, 141), *խաչե աղաչանք* (ԸԵ, 79), *արծաթե մշուշ* (ԸԵ, 80) և այլն:

Որակական ածականներն իրենց ուժեղ արտահայտչականությամբ և գեղարվեստականությամբ չափածո խոսքին հաղորդում են ուրույն որակ, գեղագիտական տպավորիչ հատկանիշներ, ինչպես՝ *փխրուն ոտիկներ* (ԸԵ, 81), *փափուկ մեղեդի* (ԸԵ, 53): Տաք ածականի հմուտ գործածությամբ, օրինակ, Ռ. Դավոյանը նոր նրբիմաստներ է տալիս բառին՝ ստեղծելով տարողունակ մակդրային կապակցություններ, ինչպես՝ *տաքուկ երազ* (ՔԲ, 35), *տաք ճանապարհ* (ԿԲԱ,8 1), *տաք-տաք տերևներ* (ԸԵ, 60), *տաքուկ բարություն* (ԸԵ, 84), *տաքուկ հրճվանք* (ՊՎ, 40) և այլն:

Երբեմն հեղինակի խոսքում շոշափելի ու տեսանելի երանգներ են ստանում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հույզը, ապրումը, խոհը. *ցանցառ տխրություն* (ԿԲԱ, 103), *շողշողուն ցավ* (ԿԲԱ, 104), *գույնզգույն շըշուկներ* (ԸԵ, 27), *փափուկ զառանցանք (*ՏՍ, 22) և այլն, որտեղ հեղինակն իրար է զուգորդում տեսողականն ու մտածականը, գույնն ու ձայնը: Երբեմն հատկանշային իմաստն ավելի է խտացվում ածականական հարադրություններով կազմված լրացումներով, ինչպես՝ *կիսացուրտ-կեստաք փողոցներ* (ՔԲ, 35), *ոսկրային-դեղին քրքիջներ* (ԿԲԱ, 289), *դեղին-դեղնափրփուր ձեռքեր* (ԸԵ, 149), *ոգեղեն-հրեղեն թռչուն* (ՔԲ, 17), *անկապ-անկապանք ստինք* (ԿԲԱ, 230) և այլն:

Ռ. Դավոյանի չափածոն առատ է նաև տարբեր դերբայներով արտահայտված մակդիրներով. 1) անորոշ դերբայի սեռական հոլովով՝ *մարգարտանալու տենչանք* (ԿԲԱ, 148), 2) ենթակայական դերբայով՝ *փողփողացող փոշի* (ԸԵ, 382), *թափառող արձագանք* (ԿԲԱ, 56), 3) հարակատար դերբայով՝ *փշաքաղված ծառեր* (ԸԵ, 382), *ջարդված տողեր* (ԸԵ, 6), *ամլացած օրեր* (ԸԵ, 379) և այլն:

Բայ գերադաս անդամով և խնդրային ու պարագայական հարաբերություններ արտահայտող բառակապակցություններից աչքի են ընկնում հետևյալները՝ ա) ուղիղ խնդիր՝ Թող գյուղի գետը սաղմոսի թախիծ (ԿԲԱ, 174), Ասֆալտի տաք, փափուկ զառանցանքն են հիշում (ՏՍ, 22), Եվ ա-

հա, սրանց տեսքով ու խոսքով նվաստացուցիչ զավեշտ են հոտում (ՔԲ, 243), բ) միջոցի խնդիր՝ Քո՝ պատանուդ սիրտը խեղդում թունաճարպով (ՔԲ, 189), գ) վերածման (փոխարկման) խնդիր՝ Եվ կփոխարկվեմ լույսի լճակի (ՔԲ, 21), դ) տեղի պարագա՝ Քնած ուղեղներում ջրվեց, քարվեց, հողվեց (ԿԲԱ, 276), ե) պատճառի պարագա՝ Պիտի վրնջանք հաճույքի ցավից (ՏՍ, 302), զ) ձևի պարագա՝ Մնացին տարտամ, Աներազ, Անտուն, Մնացին դատարկ (ԿԲԱ, 234) և այլն:

Բնութագրելով ոչ թե առարկան, այլ գործողությունը՝ պարագայական մակդիրներն իրենց քերականական նշանակությամբ կատարում են պարագաների դեր: Դրանց յուրահատկությունն այն է, որ ոչ միայն նոր հատկանիշներ են ավելացնում մակադրյալին, այլև մի տեսակ ուժեղացնում են դրանով արտահայտված գործողության փոխաբերական իմաստը:

Նշենք նաև այն, որ Դավոյանի չափածոյի բառակապակցությունների մեծ մասն ամենից առաջ աչքի է ընկնում բառային անսպասելի զուգորդություններով, օրինակ՝ *թափթփված երգեր* (ԿԲԱ, 71), *անքուն երկարություն, փոշեկոլոլ ու տափակած օրեր* (ԸԵ, 382), *աղի խրախճանք* (ԸԵ, 383), *ծաղկավոր ցուլեր* (ԿԲԱ, 134) և այլն: Նման բառերի անսովոր համադրությունը բխում է հեղինակի բանաստեղծական ինքնօրինակ տաղանդից, գեղարվեստական-փիլիսոփայական այն զգացողությունից, որը հիմք է դառնում խոսքի փոխաբերացման, պատկերի խորության շնոր- հիվ ուժեղ արտահայտչականության ապահովման: Այդպես են՝ *դարերի ոտնակոխ սիրտ* (ԿԲԱ, 156), *շողշողուն մտքեր* (ԿԲԱ, 43), *ծառեղեն կյանք* (ԸԵ, 220) և այլ բառակապակցությունները: Ռ. Դավոյանը, չափածոյում բազմազան ու բարդ հարաբերությունների մեջ դնելով բառային միավորները, իր բառապաշարին հաղորդում է փոխաբերական գործածության անսպառ հնարավորություններ և գեղարվեստորեն վերստեղծելով դրանք՝ ընդլայնում է բառի, բառակապակցության արտահայտության ինքնատիպ-գործառական սահմանները: Հեղինակը երբեմն մարդուն կամ մարդկային գործունեությանը վերաբերող բառ-որոշիչները զուգորդում է բնության երևույթների, առարկաներ անվանող բառերի հետ և ստեղծում աննախադեպ խորք ունեցող մակդիրներ, օրինակ՝ *պարծենկոտ արև* (ՔԲ, 149), *քաղցած ծովեր* (ԸԵ, 442), *կույր աշուն* (ՔԲ, 158) և այլն:

Տեսնելու, զգալու, արտահայտելու ուրույն եղանակ ունի Ռ. Դավոյանը: Գրեթե ամեն մի բառակապակցության յուրաքանչյուր բառ հեղինա-կի խոսքում գործածվում է նորովի, ստեղծում է ուժեղ տպավորություն, որն էլ ապացույց է գրողի անհատական-գեղարվեստական ընկալման, երևույթների ու դրանց լեզվական արտահայտությունների մեջ անակնկալ ու անսովոր առնչություններ հայտնաբերելու բանաստեղծական յուրահատուկ ձիրքի: Ստեղծագործական զարմանալի կարողություններով օժտված բանաստեղծը գործածում է այնպիսի դիպուկ արտահայտություններ, երևույթների անվանումներ, խոսքային բանադարձումներ, որոնք վերաիմաստավորվելով, այլաբերական ու փոխաբերական նշանակություն ստանալով՝ վերածվում են դարձվածքների, և խոսքի ընդհանուր շղթայում չի էլ նկատվում դրանց անհատական բնույթը: Նման դարձվածային միավորների մի մասը, մեր կարծիքով, կարող է ընդհանուր

տարածում գտնել լեզվում, մի մասն էլ կմնա իբրև հեղինակային նորակազմություն: Նշենք հետևյալները. *պատվի ուրուր, խանդի ճիճու՝* Բռնել է օտար մեկի մահիճում, Եվ հետո, պարզ է, ձայնել են իրար Պատվի ուրուրը և խանդի ճիճուն (ՔԲ, 247), *բենգալյան օրեր՝* Հավաքում եմ բենգալյան օրերս հանգած (ԸԵ, 395), *ներոնական թույն՝* Ազնվագույն երգի ցեցերն եք պատմական, Որ հրի եք մատնում երգի ապարանքներ Եվ խուլ քրքջում եք թույնով ներոնական (ԸԵ, 408), *հուդայական ոգի՝* Մի ինքնաբավ Հուդա ճառագում է վայելք հուդայական ոգով (ԸԵ, 559), *դոն-կիխոտյան երկարություն՝* Եվ տարածվում է մի տարածություն, Որտեղ ձրգվում է իմ դոն-կիխոտյան երկարությունը (ԸԵ, 431), *բիբլիական հաշտություն՝* Երկինքը շուտով կկապի նորից, Մի ծիածանե նարոտ կկապի՝ Որպես հաշտություն մի բիբլիական (ԿԲԱ, 226), *քրիստոնեական մեծահոգություն՝* Քրիստոնեական մեծահոգությամբ Մենք կպարզեինք մեր մյուս դեմքը՝ Թող ապտակեին (ԿԲԱ, 224), *առակախոս էշեր՝* Մայրս ասում էր՝ հեռու մնա Առակախոս այդ էշերից (ԸԵ, 297) և այլն:

Վերոհիշյալ միավորները հեղինակի չափածո խոսքը զերծ են պահում միապաղաղությունից ու միօրինակությունից, այն դարձնում են ավելի աշխույժ ու պատկերավոր, արտահայտիչ ու տպավորիչ, նպատակասլաց ու տեղին: Այսպիսով, Ռ. Դավոյանի չափածոն աչքի է ընկնում այնպիսի բառակապակցություններով և կայուն միավորի արժեք ձեռք բերող արտահայտություններով, որոնց տեղին կիրառությունը երանգավորում ու կոնկրետացնում է հեղինակի խոսքը՝ դրանով իսկ հարստացնելով, ավելի պատկերավոր ու ճոխ դարձնելով նրա ստեղծագործությունների լեզուն:

Համառոտագրություններ՝

ԸԵ - Դավոյան Ռ., Ընտիր երկեր, Ե., 1987:
ԿԲԱ - Դավոյան Ռ., Կեղևդ բաց արա, Ե., 1975:
ՊՎ - Դավոյան Ռ., Պղնձե վարդ, Ե., 1983:
ՏՍ - Դավոյան Ռ., Տաք սալեր, Ե., 1978:
ՔԲ - Դավոյան Ռ., Քարե բարձ, Ե., 1989:

СЛОВОСОЧЕТАНИЯ В ПОЭЗИИ РАЗМИКА ДАВОЯНА

ГАМОЯН Л. А.

Резюме

Употребление словосочетаний в качестве стилистического приема придает поэзии Размика Давояна особую художественную образность и выразительность, являясь отражением его оригинального языкового мышления и мировоззрения.